

Կ-077-17.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-72-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «29» թիվը փոխարինել «44» թվով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաեւ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ ռազմականացված մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն եւ զսպվածություն ցուցաբերեն»:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Դատախազները, քննիչները, ինչպես նաեւ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ ռազմականացված մարմիններում ծառայողները իրավունք չունեն հավաքին մասնակցելու ծառայողական համազգեստով»:

3) լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ հավաքներ կազմակերպելու եւ հավաքներին մասնակցելու իրավունքների լրացուցիչ սահմանափակումները կարող են սահմանվել այլ օրենքներով»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում, 18-րդ հոդվածի 1-ին մասում, 19-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 33-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանադրական» բառերը փոխարինել «հիմնական» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով դատավորի համար նախատեսված սահմանափակումները մինչև 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-077-17.07.2017-ՊԻՄԻ-011/1 օրենքի նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների

Երկրորդ ընթերցում

Կ-077-17.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-72-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «29» թիվը փոխարինել «44» թվով:

~~**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«1. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն սույն օրենքով սահմանված դեպքերում՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության եւ բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր) կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների (այսուհետ՝ այլ անձանց հիմնական իրավունքներ) պաշտպանության նպատակով.»:~~

Հոդված 32. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաեւ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ ռազմականացված մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն եւ զսպվածություն ցուցաբերեն»:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Դատախազները, քննիչները, ինչպես նաեւ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ ռազմականացված մարմիններում

ծառայողները իրավունք չունեն հավաքին մասնակցելու ծառայողական համազգեստով».

3) լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ հավաքներ կազմակերպելու եւ հավաքներին մասնակցելու իրավունքների լրացուցիչ սահմանափակումները կարող են սահմանվել այլ օրենքներով:»:

Հոդված 43. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում, 18-րդ հոդվածի 1-ին մասում, 19-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 33-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանադրական» բառերը փոխարինել «հիմնական» բառերով:

Հոդված 54. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով դատավորի համար նախատեսված սահմանափակումները մինչեւ 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը տարածվում են նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	
1.	«Ելք» խմբակցություն	Նախագծի երկրորդ հոդված	Առաջարկվում է նախագծից հանել երկրորդ հոդվածը:	Ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է:	Ընդունվել է: